

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԱԹ, 15 ՄԱՅԻՍԻ 2015Թ.
№ 14 (357)

Հայրենիքի զինվոր
եղե՛ք, հայրենիքին
մասադ...
ՍԵՐՈ ԽԱՆՉԱԴՅԱՆ



9 մայիսի 2015թ., Կապան

Խորհրդարանական լուսմներ «Համայնքների խոշորացում» թեմայով

Աժ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը մայիսի 4-ին կազմակերպել էր խորհրդարանական լուսմներ «Համայնքների խոշորացում» թեմայով, որոնց մասնակցում էին Աժ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, մարզպետներ, համայնքապետեր, փորձագետներ եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աժ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ստեփան Մարգարյանը, բացելով լուսմները, նշել է, որ քննարկվող թեման այսօր ամենակարևոր հարցերից մեկն է, քանի որ տեղական ինքնակառավարման համակարգը լուրջ բարեփոխման կարիք ունի: Նա տեղեկացրել է, որ ուսումնասիրվել է տարբեր երկրների փորձն այդ ոլորտում, տեղի են ունեցել քննարկումներ թե համայնքապետերի, թե բնակիչների հետ, որոնց տեսակետները միանշանակ չեն նախատեսված գործընթացի վերաբերյալ:

Համայնքների խոշորացման գործընթացը ներկայացրել է ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը: Խոսելով համայնքների խոշորացման անհրաժեշտության վերաբերյալ՝ նա նշել է, որ դեռևս 1996 թվականից, երբ ներդրվել է տեղական ինքնակառավարման համակարգը, այս թեման շոշափվել է, քանի որ համայնքներում կան խնդիրներ, որոնք չեն լուծվում կառավարման համակարգի անարդյունավետության պատճառով:

Կառավարությունը համայնքների խոշորացման վերաբերյալ 2011 թվականին մշակել է «Համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման» հայեցակարգը, այնուհետև ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի եւ գեղարվեստական խնդիրների հաստատմամբ սկսվել է համայնքների խոշորացման «պիլոտային» ծրագիր՝ Սյունիքի, Լոռու եւ Տավուշի մարզերում: Մայիսի 17-ին այս մարզերի մի շարք համայնքների միավորման նպատակով կանցկացվեն տեղական հանրաքվեներ՝ պարզելու համար բնակիչների կարծիքները համայնքների խոշորացման վերաբերյալ: Վաչե Տերտերյանը տեղեկացրել է, որ համայնքներում նախատեսվել են իրականացվել բազմաթիվ ծրագրեր՝ ներդրումային փաթեթներով:

Թեմայի շրջանակներում ելույթ է ունեցել փորձագետ Վահան Մովսիսյանը: Հիմնավորելով համայնքների խոշորացման անհրաժեշտությունը՝ նա նշել է, որ խնդրի կապակցությամբ բազմաթիվ հանդիպումներ են եղել թե համայնքապետերի, թե մարզերի բնակիչների հետ: Ըստ նրա՝ համայնքների խոշորացում ձեւակերպումն այնքան էլ ճիշտ չէ ընտրված, քանի որ հիմնական նպատակը համայնքների կառավարման ապարատի միաձուլումն է: Հանրապետության վարչատարածքային բաժանումը, նրա կարծիքով, արդյունավետ չէ. կան համայնքներ, որոնցում ընդամենը 3

Մեծ հաղթանակի հորեւլանը եւ Շուշիի ազատագրման փարեդարձը

Մեծ հայրենականի հաղթանակը ձեռք բերվեց նաեւ մեր հայրերի ու պապերի արյամբ: Հայագգի մոտ 600 հազար ուսուրեր եւ դուստրեր մեկնեցին Երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտեր այն հաստատ գիտակցությամբ, որ կռվում եւ պաշտպանում են նաեւ Հայաստան աշխարհը: Կա պատմական անժխտելի փաստ. Թուրքիան ռազմական մեծ ուժեր էր կենտրո-

նացրել Հայաստանի սահմանին՝ սպասելով Ստալինգրադի ճակատամարտի ելքին: Թե ինչ կկատարվեր, եթե մի անգամ էլ թուրքերն անցնեին Հայաստանով, դժվար չէ պատկերացնել: Մայիսի 9-ի հաղթանակից տարիներ հետո ավելացավ եւս մեկը. մի բացառիկ զուգադիպությամբ 1992թ. մայիսին հայ ազատամարտիկներն ազատագրեցին հն-

ոյա Շուշին: Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցուն տասնամյակներ հետո կրկին ղուղանջեցին զանգերը, հայոց եռագույնը ծածանվեց զանգակատան կատարին...

Խորհրդանշական է, որ օրվա խորհրդին պատշաճող միջոցառումը կայացավ Կապա-

էջ 4

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ. «Տեղական հանրաքվեն խորհրդարանական բնույթ ունի»

Օրակարգ

Ինչպես արդեն ասվել է, ՀՀ կառավարության մարտի 19-ի որոշմամբ մեկնարկ է տրվել համայնքների խոշորացման ծրագրին՝ կառավարության հավանության արժանացած դեռևս 2011թ. նոյեմբերի 10-ին: Մինչև ծրագրի ամբողջական իրականացումը 2015թ. կիրականացվի պիլոտային երեք ծրագիր, որից մեկը՝ Սյունիքում: Մեր մարզում առաջարկվում է միավորել Շինուհայր, Տաթև, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքները՝ Տաթևի համայնք անվամբ ու Շինուհայր համայնքային կենտրոնով: Այդ նպատակով մայիսի 17-ին նշանակվել է տեղական հանրաքվե՝ հանրաքվեի ղեկավար հետեւյալ հարցը՝ «Համաձայն եք, որպեսզի Շինուհայր,

Տաթև, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքները միավորվեն՝ Տաթևի համայնք անվամբ, Շինուհայր համայնքային կենտրոնով»:

Հանրաքվեի նախապատրաստության մասին գրուցեցինք թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Ստեփանյանի հետ:

- Պարոն Ստեփանյան, մայիսի 17-ին հանրապետության մի քանի համայնքներում, այդ թվում Գորիսի տարածաշրջանի մի քանի գյուղական համայնքում տեղի կունենա տեղական հանրաքվե՝ համայնքների խոշորացման վերաբերյալ բնակչության դիրքորոշումը պարզելու նպատակով: Իբրև պիլոտային ծրագրի մի մաս նախատեսվում է Տաթևի ենթաշրջանի գյուղերը միա-



վորել մեկ համայնքում: Մի կողմ թողնելով հարցի քաղաքական, տնտեսական, սոցիալական ասպեկտները՝ խոսենք հանրաքվեի կազմակերպական հարցերից. կարծեմ թե, տեղական հանրաքվեն նորություն է մեզ համար:

էջ 3

էջ 3

Կայացավ «Տաթև» ազգային պարկի եւ Կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծման ծրագրերի քննարկման մեկնարկային հանդիպումը

Երեւանում տեղի է ունեցել «Տաթև» ազգային պարկի եւ Կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծման ծրագրերի քննարկման մեկնարկային աշխատանքային հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին շահագրգիռ տարբեր կառույցների՝ պետական մարմինների, մարզային իշխանությունների, հասարակական եւ բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչներ:



Մամուլի հաղորդագրություն

Օրագրերի հիմնական նպատակն է Տաթևի տարածաշրջանում ստեղծել ազգային պարկ, որը կապահովի

տարածքի էկոհամակարգերի եւ հարուստ կենսաբազմազանության պահպանությունը: Ծրագրերի շրջանակում կիրականցվեն նաեւ աշխատանքներ «Սատանի կամուրջ» բնության հուշարձանի բարեկարգման եւ կառավարման բա-

րելավման ուղղությամբ: ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, ողջունելով հյուրերին եւ բարձր գնահատելով նոր ազգային պար-

էջ 6

Ցանկ 2015 ֆինանսական տարվա հունվար-մարտ ամիսներին առաջին 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի ու տուրքերի մեծությունների (հազ. դրամ). Սյունիքի մարզ

Հ/հ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ընդամենը
4	ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂԱԶԱՄՈՒԻԲԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱԶԱՐԱՆ	4,036,631.8
29	ԴԱՆՌԻ ՓՐԻՇՆ ՄԵԹԱՆԱ ԿԱՊԱՆ	ԿԱՊԱՆ	890,474.2
36	ԱԳԱՐԱԿԻ ՊՂԱԶԱՄՈՒԻԲԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	726,710.6
40	ՈՐՈՏԱՆԻ ՀԻՂՈՒՆԵԿՏՐԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	627,971.0
72	ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ	ԱԳԱՐԱԿ	378,062.5
276	ՋԱՆԳԵԶՈՒՐ ՍԱՅՆԻՆԳ	ՔԱԶԱՐԱՆ	87,848.1
316	ԱՐՊԱՆԻԿ	ԳՈՐԻՍ	77,590.0
317	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	77,298.5
339	ԼԵՆ-ԷՔՍ	ԿԱՊԱՆ	70,914.6
446	ՋԱՆԳԵԶՈՒՐ ԵՆԵՐԳՈ	ԿԱՊԱՆ	53,089.0
479	ԿԱՊԱՆԻ ՃԱՆՊԱՐԳ. ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	ԿԱՊԱՆ	48,696.8
610	ՄԵՂՐՈՒ ՃՇՇԶ	ՄԵՂՐԻ	36,278.4
649	ՈՌՅԱԼ ՓՐԻՆԹ	Գ.ՀԱՐԺԻՍ	34,048.2
736	ԱԳ ԲԻԶՆԵՍ	ԱԳԱՐԱԿ	29,660.5
801	ԱՐՈՎԱ	ԿԱՊԱՆ	26,537.7
821	ՌԵՏԻՆԵ ՆՈՐՈՒՅԹ	ԳՈՐԻՍ	25,896.2
883	ԱԼ ԽԱԼԻԴԻԱ ՏՈՒՐԻԶՄ	ՄԻՍԻՆ	23,480.7
902	ԿՐԻՎԱՄՈՆ	ԿԱՊԱՆ	22,836.0
955	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԿԱՊԱՆ	21,384.2



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանին

Ծայրագույն պարփարք եւ Ամենայն հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Քարեգին Բ-ին

Մեծարգո՝ նախագահ Հայաստանի Հանրապետության

Վեհափառ Տեր


Ս.ք. ապրիլի 23-ին, երբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում սրբադասվում էին Հայոց ցեղասպանության նահատակները, մեր հոգեւոր հայրերի աղոթքներում ու աստվածական խոսքերում քանիցս հնչեց նաեւ Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս, տիեզերահռչակ ու բազմապատիկ լուսավորիչ հայոց, Սուրբ Էջմիածնի վերստին նորոգող, Հայ առաքելական եկեղեցու վերջին սուրբ Մովսես Տաթևացու (խոտանանցու) անունը:

Հայոց մեծահամբավ այդ վարդապետի շիրիմը, սակայն, միլիոնավոր հայերի համար գտնվում է անհայտության մեջ:

Տասնամյակներ շարունակ, հայտնի պատճառով, անտարբեր վերաբերմունք է ցուցաբերվել նրա հիշատակի հանդեպ:

Կարծում ենք՝ եկել է ժամանակն անդրադառնալու այդ հարցին:

Մովսես Տաթևացու մահկանացուն կնքեց 1632թ. մայիսի 14-ին եւ թաղվեց Երեւանի հնագույն գերեզմանոցներից մեկում՝ Կոզեռնի գերեզմանատանը՝ 10-11-րդ դարերի հայոց մեծ վարդապետ Հովհաննես Կոզեռնի եւ Մելիքսեթ Վժնցի վարդապետի մեջտեղում: Հետագայում այդտեղ՝ դրանց գերեզմանների վրա, շինվեց մի վայելույշ մատուռ՝ կոչվելով «Կոզեռնի մատուռ», որը 1829թ. հիմնանորոգվեց: Այդ մատուռը ժամանակին համարվել է մեծ սրբավայր, այնտեղ ննջող սրբի



հիշատակին հաճախ Սուրբ պատարագ է մատուցվել:

Սակայն, Երեւան քաղաքի ընդարձակման նկատառումներով, 1934թ. որոշում է կայացվել տեղափոխել Կոզեռնի գերեզմանոցը: Աստուծո ողորմությամբ, մինչդեռ, մատուռը կանգուն է մնացել, թեւ արտաքինից չի երեւում:

1955 թվականից մատուռը դարձել է բնակելի տուն՝ որոշակի վերափոխումների ենթարկվելով:

Բազմաթիվ մասնագետների կարծիքով՝ բնակության համար հարմարեցված մատուռի այլևս բեռնաթափառ հատակի ներքո են Մովսես Տաթևացու, Հովհաննես Կոզեռնի եւ Մելիքսեթ Վժնցու սրբատուն նշխարները:

Մովսես Տաթևացու շիրմի շուրջ ստեղծված վիճակը հանգուցալուծում է պահանջում:

Հավատում ենք, որ Դուք ակնածանք կտածեք սուրբ Մովսես Տաթևացու հիշատակի հանդեպ եւ պատշաճ վերաբերմունք կմատուցեք նրա շիրմին՝ միլիոնավոր վայրը բարեկարգելով, ուխտատեղին վայելույշ տեսքի բերելով, ինչի համար անհրաժեշտ կլինի նախաձեռն իրականացնելու: Հավատում ենք, որ Դուք ակնածանք կտածեք սուրբ Մովսես Տաթևացու հիշատակի հանդեպ եւ պատշաճ վերաբերմունք կմատուցեք նրա շիրմին՝ միլիոնավոր վայրը բարեկարգելով, ուխտատեղին վայելույշ տեսքի բերելով, ինչի համար անհրաժեշտ կլինի նախաձեռն իրականացնելու: Հավատում ենք, որ Դուք ակնածանք կտածեք սուրբ Մովսես Տաթևացու հիշատակի հանդեպ եւ պատշաճ վերաբերմունք կմատուցեք նրա շիրմին՝ միլիոնավոր վայրը բարեկարգելով, ուխտատեղին վայելույշ տեսքի բերելով, ինչի համար անհրաժեշտ կլինի նախաձեռն իրականացնելու:

Սուրբի լուծման տարբերակներից մեկն էլ Մովսես Տաթևացու նշխարների վերաբաղումն է Սուրբ Էջմիածնում կամ Տաթևի վանքում:

Հավատում ենք նաեւ, որ այդ քայլով եւ Դուք, եւ մենք՝ բոլորս, կարճամեամանք սուրբ Մովսես Տաթևացու բարխոսությանն առ Աստված, որպեսզի Բարձրալի ողորմության դռները բացվեն Հայոց աշխարհի վրա:

Հարգանքով Սուրբն Խաչատրյան Սյունիքի մարզպետ

Խնդրագրության կողմից

Հետաքրքիր զարգացումներ են տեղի ունենում մարզի տնտեսությունում: Նախ՝ «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ում, կարծեք, կանգ է առել հետընթացը: Այս տարվա առաջին եռամսյակում մոտ 1 մլրդ դրամով ավելի հարկ է վճարվել պետությանը, քան 2014-ի նույն ժամանակաշրջանում: Դա արդեն լավ է:

Վիճակը գրեթե անփոփոխ է «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ում՝ համեմատած նախորդ երեք տարվա նույն ժամանակաշրջանի հետ:

Նույնը, սակայն, չի կարելի ասել «Դանդի փրիշու մեթալս Կապան» ՓԲԸ-ի մասին: Այդ ընկերությունում, ըստ էության, վիճակը շարունակում է վատանալ: Օրինակ, 2013թ. առաջին եռամսյակի համեմատությամբ վճարված հարկերի գումարը գրեթե կիսով չափ կրճատվել է. 2013-ի նույն ժամանակում վճարվել է մոտ 1,6 մլրդ դրամ, այս տարվա առաջին

եռամսյակում՝ 0,8 մլրդ դրամ:

Մի ուրիշ միտում էլ է նկատվել. խոշոր հարկատուների ցանկից այսուհիջյան 13 կազմակերպություն առաջին եռամսյակի արդյունքներով դուրս է մնացել՝ Սիսիանի եւ Կապանի բեռնաուղեորատար ավտոտրանսպորտային ձեռնարկություններ, Սիսիանի «Ելյախիկ», Գորիսի «Ռսմար», Կապանի «Դանեսիա», Կապանի «Նորոգչին», «Կապան-Էներժի», «Քաջարան-մոնտաժ», «Գորիսի ԷՅՇ», «Քաջարանի մեխանորոգում», Անգեղակոթի «Ռստանիկ հայրենյաց», Կապանի «Շահիր» ընկերությունները, Գորիսի բժշկական կենտրոնը:

Միաժամանակ խոշոր հարկատուների սյունիքյան քարտեզի վրա հայտ են եկել նոր տնտեսավարողներ՝ «Ձանգեզուր-Էներժի» (Կապան), «Ագ քիզնես» (Ագարակ), «Արո վա» (Կապան), «Ռետիմե նորոյթ» (Գորիս), «Ալ խալիդիա տուրիզմ» (Սիսիան), «Կրիկամոն» (Կապան):

Խորհրդարանական Լուսմներ «Համայնքների խոշորացում» թեմայով

Մարդ է ապրում, եւ կան համայնքներ, որտեղ մարդիկ չեն ծնեռում եւ այլն: Ուստի, ըստ նրա 915 համայնք ունենալը եւ կառավարման ապարատ պահելը նպատակահարմար չէ: Նա նաեւ տեղեկացրել է, որ բարեփոխման արդյունքում որեւէ համայնք անդեկավար չի մնալու:

չեն կրճատվելու աշխատատեղեր, իսկ համայնքների խոշորացման նպատակն էլ ֆինանսական ռեսուրսների խնայողությունը չէ: Ըստ բանախոսների՝ համայնքների բյուջեների մոտ 90 տոկոսն ուղղվում է ապարատների պահպանությանը, հետեւաբար գումար չի մնում կապիտալ ներդրումների համար: Նրանց կարծիքով՝ այդ խնդիրը կլուծվի համայնքների խոշորացմամբ: Հարցի կապակցությամբ իրենց

տեսակետներն ու մտահոգություններն են ներկայացրել Աժ պատգամավորներ Արայիկ Գովհաննիսյանը, Գովհաննես Մարգարյանը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Դավիթ Թումանյանը եւ Էմին Երիցյանը: Եզրափակիչ ելույթում Աժ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ստեփան Մարգարյանն ընդգծել է համայնքների խոշորացման անհրաժեշտությունը եւ կարեւորել տարբեր ձեւաչափերով քննարկումները: parliament.am

Տեղական հանրաքվե. ի՞նչ կրա համայնքների խոշորացումը

Կարծիքների խաչմերուկ

Համայնքների խոշորացման գործընթացը, որ ավելի քան երեք տարի առաջ հավանության էր արժանացել կառավարության կողմից, այժմ սկսվում է իրագործվել գործնական ծրագրերով: Կառավարության պիլոտային (մեկնարկային) ծրագրով նախատեսվում է երեք մարզում, այդ թվում՝ Սյունիքում, միավորել համայնքներ: Սյունիքի մարզում նախատեսվում է միավորել Շինուհայրի, Հալիծորի, Հարժիսի, Սվարանցի, Խոտի, Տանձատափի, Քաշունի համայնքները: Մամուլի տվյալների համաձայն՝ տարբեր համայնքների համախմբումը տեղի է ունենալու մի քանի կարեւոր գործոնների շուրջը՝ ըստ նպատակահարմարության. դա կարող է լինել համախմբում մի ապարանքանիշի շուրջը, ինչպես, ասենք, Սյունիքի մարզի դեպքում: Ծրագրով նախատեսվում է, որ խոշորացվող համայնքը Տաթևի է կոչվելու, բայց նրա վարչական կենտրոնը լինելու է Շինուհայր գյուղը: Ինչեւէ, համայնքների խոշորացման մասին վերոհիշյալ բնակավայրերի բնակիչների կարծիքն իմանալու նպատակով մայիսի 17-ին անցկացվելու է տեղական հանրաքվե: «Սյունյաց երկիրը» ծրագրի վերաբերյալ բնակչության վերաբերմունքն ու տրամադրություններն իմանալու նպատակով եղավ մի քանի համայնքում՝ Հարժիս, Խոտ, Հալիծոր, Սվարանց, որոնք մասնակցելու են հանրաքվեին: Ուշագրավ է, որ հարցվող անձինք չսահմանափակվեցին խնդրո առարկային առնչվող կարծիք հայտնելով, նաեւ խոսեցին իրենց համայնքների հիմնախնդիրների մասին:

հարցը, Խոտը, Հարժիսը, Հալիծորը, միավորվել են մի սովխոյի մեջ, տնտեսության խոշորացում է եղել խուլշոյի տարիներին: Մի տարի է տեւել դրա գոյությունը, կյանքը ցույց է տվել, թե այդ միավորումն ինչ բացասական հետեւանքներ է ունեցել, ինչի պատճառով այդ միավորումը 1965 թվականին կազմաքանդվել է: Խոտը եւ Շինուհայրը միավորվել են մի տնտեսության, Հարժիսն ու Հալիծորը՝ այլ տնտեսության մեջ: Դրա գոյությունը տեւել է մինչեւ 1977 թվականը, որից հետո գյուղերից յուրաքանչյուրն ունեցավ իր տնտեսությունը: Մարդկանց մեջ մի մտայնություն է ձեւավորվել. ինչո՞ւ մենք պիտի ենթարկվենք Շինուհայրի իշխանությանը: Բայց իմ կարծիքն աստիճանաբար թեքվում է դեպի համայնքների խոշորացման տարբերակը: Ինչո՞ւ: Որովհետեւ յուրաքանչյուր համայնքի բյուջեն բավարարում է միայն գյուղապետարանի աշխատակազմը պահելու համար: Ոչ մի սոցիալական խնդիր համայնքում չի լուծվում մեծ մասամբ: Բացի դրանից մի շատ տխուր փաստ է արձանագրվում, գյուղերը դատարկվում են: Մանավանդ դա արտացոլվում է գյուղերի դպրոցների աշակերտների թվի նվազեցման մեջ: Այս վերջին տասը տարում մեր գյուղի դպրոցի աշակերտների թիվը նվազել է: Առաջին դասարան չորս աշակերտ է հաճախում, անցյալ տարի 127 աշակերտ էր դպրոցում, հիմա՝ 108: Միտումը դպրոցակազմների թվի նվազումն է, ինչն անչափ ցավալի է: Յուրաքանչյուր ընտանիքի բացակայությունն ինձ համար ցավ է եղել: Նաեւ մի օրինակափոխություն են նկատել. յուրաքանչյուր համայնք ունի բնակչության մի սահմանագիծ, որից ցածրը գյուղի քայքայման է տանում: Մեր գյուղն առայժմ մոտ չէ այդ սահմանագիծին, բայց միտումը դրան մոտենալն է, քանի որ գյուղից ընտանիքներով են հեռանում: Կառավարությունից եկել, խոստումներ էին տալիս. գյուղը զգալ ենք հասցնելու, ճանապարհը նորոգելու ենք, բայց որ մարդ չկա, որպես ի՞նչ: Գլխավորը զբաղվածության խնդիրը լուծելն է: Գյուղում միակ զբաղմունքը մնացել է անասնապահությունն ու դաշտավարությունը, բայց արի ու տես, որ գյուղացին իր արտադրած անասնապահական մթերքի ձեռքը կրակն է ընկել: Երբ իրանցիները Սյունիքից ոչխար էին գնում՝ գլուխը՝ 50-60 հազար դրամով, մարդիկ վարել վերցրին բանկերից, ոչխար ձեռք բերեցին, զարկ տվեցին ոչխարաբուծությանը, հիմա ոչխարի միսը չի իրացվում: Արտադրողը կանգնել է փակուղու առջեւ: Իշխանությունն այդ մասին պիտի մտածի: Կամ գյու-

ղացին կով է պահում, ուրիշ ի՞նչ պիտի անի: Կաթի գինը դարձրել են 120 դրամ: Սեկ լիտր կաթի գինը բերել-հասցրել են մեկ շիշ հանքային ջրի գնին: Մեր գյուղում 550 հա աշխատանք էին կատարում, հիմա 50 հա հագիվ լինի: Պատճառը: Մի տարի առաջ ցորենի կիլոգրամը 150-160 դրամ էր, հիմա դարձրել են 120 դրամ: Դիզվառելիքի, պարտատնյութի, հնձի գինը որ հանում են, տակը բան չի մնում: Արտասահմանյան երկրներում ֆերմերներին արտոնություններ են տրվում՝ արտադրածն իրացնելու համար: Հի մա մենք ցանքս ենք կատարել: Ի՞նչ երաշխիք, որ աշխատը մեր արտադրած ցորենը կիրացնենք: Իշխանությունը նախապատվությունը պիտի տեղացի արտադրողին տա, ոչ թե նույն այդ մթերքը ներկրողին: Անցնելով հանրաքվեի թեմային, ասեն, որ արդեն տարբեր գյուղերից ձայներ են հնչում, թե ինչու Շինուհայրից մեզ պիտի ղեկավարեն, նման հոգեբանություն կա արդեն: Խնդիր լուծման ամենաճիշտ տարբերակը համարում են խորհրդային ժամանակների շրջանների վերականգնումը: Հիշում եք, որ այն ժամանակ շրջափոխող գործկոմի նախագահն է շրջանը ղեկավարել: Դա ավելի լավ մեխանիզմ էր, թող համայնքների ղեկավարման կենտրոնը Գորիսում լինի, այդ դեպքում շինուհայրի ղեկավարը բնական կհամարվի, այսօրվա պես չի ընկալվի: Միշտ գյուղերի միջեւ հակասություններ, ներքին մրցակցություն եղել են: Գյուղերի խոշորացման ծրագիրն իրականացնելով՝ այդ հակասություններն ավելի են խորանալու:



ԳՐԻՇԱ ՄԻՆԱՅԱՆ Հարժիս գյուղի բնակիչ

Համայնքների խոշորացում կլինի, չի լինի, թե մի այլ բան կլինի, հավատացած են, գյուղացու հանդեպ վերաբերմունքի մեջ ոչ մի բան չի փոխվելու: Եթե Սյունիքը մեկ համայնք էլ սարքեն, ոչինչ չի փոխվելու, համայնքների խոշորացումը

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ. «Տեղական հանրաքվեն խորհրդարանական բնույթ ունի»

Օրակարգ

Եջ 1 - Համեմայն դեպքում աշխատանքային գործունեության ընթացքում առաջին անգամ է անցկացվում տեղական հանրաքվե: Այն կարգավորվում է ՀՀ ընտրական օրենսգրքով եւ բնույթով նման է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին՝ մի տարբերությամբ միայն. լիազոր մարմնի, այս դեպքում՝ անձնագրային բաժնի կողմից հաստատված ընտրացուցակների վերանմանում գրվում է տեղական հանրաքվեի ընտրացուցակ եւ ներկայացվում առաջադրվող հարցը:

- Ո՞վ իրավունք ունի մասնակցել տեղական հանրաքվեին: Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն 33 ընտրական օրենսգրքով ՏԻՄ ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, այն է՝ 18 տարեկանից բարձր եւ տվյալ համայնքում հաշվառված ՀՀ քաղաքացիներ, փախստականի կարգավիճակ ունեցող կամ տվյալ համայնքում բնակվող, բայց փաստացի չհաշվառված 18 տարին լրացած անձինք: Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն միայն այն պայմանագրային զինծառայողներն ու ոստիկանները, ովքեր հաշվառվել են տվյալ համայնքում:

- Ինչպե՞ս էք կազմավորել ընտրական տեղամասերը: Յուրաքանչյուր գյուղում կլինի մեկ ընտրական տեղամաս, քանի որ համայնքների բնակիչների թիվը չի գերազանցում 2000-ը: Ինչպես ՏԻՄ ընտրությունների ժամանակ, քվեասենյակը կբացվի առավոտյան ժամը 8.00-ին եւ կփակվի 20.00-ին: Բնակաչափաբար, վստահված անձ չի լինի, բայց կլինեն դիտորդներ, ովքեր հավասարաձայնվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ընտրությունից մեկ ամիս առաջ: Ինչ վերաբերում է լրատվամիջոցներին, ապա նրանց մուտքը ազատ է. ընտրատեղամասում գրանցվելուց հետո իրենց վկայականներով կարող են մտնել ընտրատեղամաս եւ լուսաբանել հանրաքվեի ընթացքը:

- Ի՞նչ կասեք ընտրացուցակների մասին: Նախնական ընտրացուցակները համապատասխան ժամկետներում արդեն փակցված են ընտրատեղամասերում: Առայժմ խնդիրներ չեն առաջացել ցուցակներում, ութ համայնքում ունենք 4404 ընտրող: Վերջնական ցուցակը հանրաքվեից երկու օր առաջ ենք փակցնելու: Այն քաղաքացին, ում անունը ցուցակում չկա, կարող է դիմել լիազոր մարմնին՝ անձնագրային բաժնին, որ հանրաքվեին մասնակցելու համապատասխան տեղեկանք կտրամադրի, իսկ եթե անձնագրային բաժնից, ինչ-ինչ պատճառներից ելնելով, հրաժարվի տեղեկանք տրամադրել, որ քիչ հավանական է, քաղաքացին իր իրավունքները վերականգնելու համար կարող է դիմել դատարան: Նշենք, որ այդ օրերին դատարաններն աշխատում են:

- Համառոտ ներկայացրեք տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման մասին: Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման վերջնական ժամկետն ապրիլի 22-ն էր: Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովը վերլուսակ-

ցական է: Ներկայացվում են Աժ-ում ծայն ունեցող վեց կուսակցությունից մեկական ներկայացուցիչ եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի երկու անդամ (ԸԸՀ անդամներից վիճակահանությամբ է երկու անդամ ընտրվում)՝ բացի ԸԸՀ նախագահից:

- Հանձնաժողովի անդամների համար նախատեսվո՞ւմ է համապատասխան դատընթացների կազմակերպում: Հանձնաժողովի անդամներն ունեն համապատասխան լիզենցիա. մինչ այժմ որեւէ նմանատիպ դատընթաց չի անցկացվել, բայց, կարծում են, տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվելուց հետո պարտադիր ուսուցում կկազմակերպվի:

- Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ն է համայնքների խոշորացման հանդեպ ժողովրդի նախնական տրամադրվածությունը: Որպես ընտրական հանձնաժողովի նախագահ չեմ կարող այդ հարցին պատասխանել, բայց որպես քաղաքացի կարող եմ ասել, որ կարծիքներն իրարամերժ են: Չնայած տեղական հանրաքվեն խորհրդատվական բնույթ ունի, բայց բավական լուրջ քաղաքական միջոցառում է:

- Նախորդ տարիների ընտրությունների փորձից ելնելով՝ ընտրողների մոտավոր քանի՞ տոկոսը կմասնակցի հանրաքվեին: Կարծում են՝ մոտ 50-60 տոկոսը:

- Տեղական հանրաքվեի արդյունքներն ամփոփվելու են փոքրիկ մասշտաբով, թե՛ ըստ գյուղերի: Հանրաքվեի արդյունքները դրական են համարվում, եթե դրան կողմ է քվեարկել մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս քվեարկողների մեկ երրորդ մասից: Արդյունքներն ամփոփվելու են փոքրիկ մասշտաբով, առանձին համայնքի կարծիքը որոշիչ չէ: Վերջնական արդյունքները ներկայացվելու են հնգօրյա ժամկետում:

- Ի՞նչ էք կարծում՝ ի՞նչ կհաջողի տեղական հանրաքվեին: Բնականաբար, պիտի անցկացվեն ՏԻՄ ընտրություններ. կկազմավորվի Տաթևի համայնք՝ Շինուհայր կենտրոնով: Կընտրվի մեկ համայնքապետ, կկազմավորվի մեկ ավագանի՝ առավելագույնը 15 անդամից կազմված: Բնականաբար, որ գյուղը մեծ լինի, այնտեղի ներկայացուցիչները շատ են լինելու, որ այս ռեֆորմի խոցելի տեղերից մեկն է: Կարծում են՝ ճիշտ կլինի, որ համապատասխան որոշում լինի, ըստ որի՝ ամեն համայնքից բնակիչների շահերը պաշտպանելու համար գոնե մեկ ներկայացուցիչ ավագանու կազմում լինի:

- Ձեր խոսքն ընտրողներին: Կազմակերպական առումով աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, քարոզարշավ չի լինելու, բնակիչներին հարցի մասին կիրառվի համայնքապետը: Եթե ժողովուրդը դեմ քվեարկի, միեւնույն է, պիլոտային ծրագրի իրագործումը չի կասեցվի: Որպես թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ կարող եմ երաշխավորել արդար եւ քափանցիկ հանրաքվե: Կոչ են անում քաղաքացիներին ակտիվ մասնակցություն ունենալ տեղական հանրաքվեին:



ՄԻԽԱԵՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հարժիս գյուղի բնակիչ

Մտավոր նախադեպը ունենք, 1964 թվականին չորս գյուղ՝ Շինու-

70 տարի անց

Մեծ հաղթանակի հոբելյանը եւ Շուշիի ազատագրման փարեդարձը



Էջ 1 Մեծ տեղակայված զորամասում, որտեղ տեղի ունեցավ միտինգ եւ հանդիսավոր երթ:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70 եւ Շուշիի ազատագրման 23-ամյակներին նվիրված տոնախմբությունների շարքը մեկնարկեց Գարեգին Նժդեհի հրապարակից: Մայիսի 9-ի առավոտը տրամադրող էր. արեւոտ օրվա երանգներին միախառնվել էին փողային նվագախմբի հնչեցրած տոնական մեղեդիները: Մարդիկ միմյանց շնորհավորում էին Հայրենական եւ խաղաղության տոնի ու Շուշիի ազատագրման օրվա առթիվ, բնականաբար, բարեմաղթանքների մեծ մասը երկրորդ աշխարհամարտի մասնակիցներին էր ուղղված: Հանդիսությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի նախագահ, գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանը, Մեծ հայրենականի մասին մեծագործությունների հեղինակ, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը, բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, նաեւ վետերանական կազմակերպություն Սիսիանի տարածաշրջանից:

Մեկը Գրիգորյանը՝ Սիսիանի թափափ Գյուղից, ռազմաճակատ է մեկնել 1942թ. դեկտեմբերին: Նախ՝ դիպուկահարների դասընթացներում է հմտացել, հետո հրետամավոր է եղել: Պատերազմին մասնակցել է 2-րդ բելոռուսական ռազմաճակատի կազմում: «Մեր հրամանատարը Ռոկոսսկիին է եղել՝ ազգությամբ լեհ», - պատմում է նա, - 1943թ. վերավորվել եմ Վելիկե Լուկի քաղաքում, երկրորդ անգամ վիրավորվել եմ օդային ռմբակոծության հետևանքով: Թշնամու ինքնաթիռները ռումբեր են նետել զինվորներ տեղափոխող զննարկի վրա, որում նաեւ ես էի գտնվում: Հաղթանակի օրը դիմավորել եմ Սիբիրի Տոմսկ քաղաքի հոսպիտալում»:

Մեկ այլ սիսիանցու՝ Արամայիս Հունանյանի (Սավվարդ Գյուղից), ով ռազմադաշտ է մեկնել 1943թ. հունվարի 19-ին, մարտական ուղին

անցել է Կրասնոդար-Կրասնոարմեյսկ-Թամանի թերակղզի-Նովոռոսիյսկ բնակավայրերով: Վիրավորվել է, ապաքինվելուց հետո կրվել է 1-ին ուկրաինական ռազմաճակատի կազմում: Ժխտմի պաշտի համար մղված մարտի ժամանակ կրկին վիրավորվել է:

Տարիներն իրենց անում են: Չավեն Առաքելյանը (Կապան) նույնպես Գարեգին Նժդեհի հրապարակում է, բայց հաշմանդամի սայլակին նստած: Հիշում է ռազմաճակատ մեկնելու տարեթիվը՝ 1944-ի նոյեմբերի 25: Կապանցի մոտ 200 հասակակցի հետ՝ 17-18 տարեկան երիտասարդներ, կայարանում գնացք նստեցին: Մասնակցեց ռազմական գործողությունների 2-րդ բելոռուսական ռազմաճակատի կազմում:

Տոնախմբությունը սկսվում է Կապանում տեղակայված զորամասի զինվորների հանդիսավոր քայլերով:

Գարեգին Նժդեհի հրապարակում մարտական հնարքներ ցուցադրեցին ռազմական հետախուզական վաշտի զինվորները: Այնուհետև տոնախմբության մասնակիցները բարձրացան Բաղաբուրջի հուշահամալիր: Մեծ հայրենականում ընկածների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողին ծաղկեպսակներ դրվեցին մարզային եւ քաղաքային իշխանությունների, հիմարկ-ծեռնարկությունների եւ հասարակական կազմակերպությունների կողմից:

Ծանր ու դժվարին է եղել դեպի Ռայխստագ տանող ճանապարհը: Մոտ 7000 կապանցի մեկնեց երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտեր, որոնցից 3036-ը չտեսավ հայրենի եզերքի վրա բացվող խաղաղ առավոտները: Ծաղկեպսակ դրվեց նաեւ մերօրյա պատերազմի սպարապետ Վազգեն Սարգսյանի կիսանդրու պատվանդանին:

Այնուհետև տոնախմբության մասնակիցները եղան Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանում, որտեղ ցուցադրանք էր կազմակերպվել «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել» խորագրով: Տոնախմբությունը շարունակվեց Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգում: Մինչ այդ վետերանների համար կազմակերպվել էր ռազ-

Տոնախմբությունը սկսվում է Կապանում տեղակայված զորամասի զինվորների հանդիսավոր քայլերով

մադաշտային խոհանոց: Երկրորդ աշխարհամարտի մասնակիցները վայելեցին մեկ բաժակ օղին՝ տափաշշերից լցված, որ նրանց տրվում էր պատերազմի ցրտաշունչ օրերին, ինչպես զինվորներն էին ասում, հարյուր գրամ՝ ի պետս քաջության: Սեղանների շուրջ բոլորած վետերանները հանդես եկան հուշերով:

Հարգանքի տուրք մատուցվեց նաեւ խորհրդային Սիւրբյան հերոս Հունան Ավետիսյանի հիշատակին, նրա հուշարձան-կոթողի պատվանդանին ծաղկեպսակներ դրվեցին Կապանի վետերանական կազմակերպության, տարբեր տարիքի ու զբաղմունքի մարդկանց կողմից:

Խաղաղության եւ հաղթանակի տոնին նվիրված հանդիսավոր միջոցառումը տեղի ունեցավ մանկական զբոսայգու բացօթյա դահլիճում: Հայրենական պատերազմի վետերաններին, միջոցառման մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: «Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ՝ Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ, տոն, որ մեզ համար նշանավորվում է 20-րդ դարի կեսին Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակով, որին հերոսական մասնակցություն ունեցավ հայ ժողովուրդը եւ արդեն դարավերջին մեր պատմության մեկ այլ փառապանծ էջով՝ Շուշիի ազատագրմամբ», - իր ելույթում մասնավորապես ասաց քաղաքապետը:

Գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանն իր խոսքում ներկայացրեց հայ ժողովրդի ավանդը Մեծ հաղթանակի ձեռքբերման գործում: Մասնավորապես նշելով, որ Մեծ հայրենականին մասնակցեց վեց դիվիզիա, որից Թամանյան 89-րդ միակն էր ազգային դիվիզիաներից՝ Բեռլինի գրավմանը մասնակցած:

Ծերունագարդ վետերան Գարեգին Մելիքսեթյանը երախտագիտություն հայտնեց երկ-

րորդ աշխարհամարտի մասնակիցների վաստակը գնահատելու համար, անամպ երկինք մաղթեց մերօրյա սերնդին: Միջոցառման մասնակից պատերազմի վետերաններին հանձնվեցին «1941-1945. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակ» հոբելյանական հուշանշան, իսկ երկրպագի կամավորականների միության մի խումբ անդամների՝ պատվոգիր: Կապանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը շնորհակալագիր հանձնեց Սյունիքի մարզպետին եւ Կապանի քաղաքապետին:

Հանդիսավոր միջոցառումը եզրափակվեց տոնական համերգով՝ հանդես եկան երաժշտական կոլեկտիվներ եւ անհատ կատարողներ, եւս մի անգամ հնչեցին պատերազմական տարիների անմահ երգեր ու մեղեդիներ: Իսկ երեկոյան մարզկենտրոնի երկինքը երփներանգվեց անմահադեպ հրավառության գույներով:

Խաղաղության եւ հաղթանակի տոնի շրջանակում Կապանի երկրագիտական թանգարանում բացված ցուցադրությունը պատմում էր կապանցիների՝ Մեծ հայրենականի մասնակցության մասին: Փաստավավերագրական հարուստ նյութ էր ժողովված թեմատիկ առանձին բաժիններում՝ «Վերին խոտանանը՝ հերոս հրամանատարների ծննդավայր», «խորհրդային Սիւրբյան կապանցի հերոսները», «Կապանցի ռազմական օդաչուները», «Կապանցի Մեծ հայրենականում» եւ այլն:

Առանձին մի անկյուն էր հատկացվել ռազմական պատմաբան, պահեստազորի գնդապետ, ՀՀ ազգային արխիվի հիմնադիր, երկարամյա տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հարությունյանին: «Բրեստի ամրոցի կապանցի պաշտպանները» ցուցադրությունից թանգարանի այցելուները տեղեկանում են, որ հերոս ամրոց Բրեստի պաշտպանությանը մասնակցել է 123 կապանցի՝ հիմնականում մանկավարժներ: Թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը տեղեկացնում է, որ հնարավոր է եղել ճշտել նրանցից 82-ի անունը: «Որոշումները շարունակվում են, էլի կգտնվեն», - համոզված է պատմաբանը: Ցուցադրանքում կան եզակի նմուշներ, օրինակ՝ այն ռադիոն, որ հայտարարել է պատերազմը սկսվելու մասին եւ ազդարարել գերմանական ֆաշիզմի դեմ այնքան սպասված հաղթանակի լուրի մասին: «Թռչելի մտքով տուն» բաժնում մեկտեղված են կապանցի մարտիկների նամակները՝ ուղարկված ռազմաճակատից:

Ուսումնական հաստատություններում Մեծ հաղթանակի 70-ամյակին նվիրված միջոցառումներ տեղի ունեցան մայիսի 9-ին նախորդող շաբաթվա ընթացքում, իսկ մայիսի 8-ին՝ երկրպագի օրը, Բաղաբուրջի հուշահամալիր այցելեցին կապանցի երկրպագիները, ծաղիկներ դրեցին իրենց նահատակ զինակիցների շիրմներին, Սպարապետ Վազգեն Սարգսյանի կիսանդրու պատվանդանին:

Մեծ հաղթանակի հոբելյանին եւ Շուշիի ազատագրման տարեդարձին նվիրված հանդիսություններ տեղի ունեցան Քաջարանում եւ Կապանի տարածաշրջանի գյուղական համայնքներում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանում տեղական ժամանակ գործող փրկակալի թափրոնը, կարծեք, ստվերում է մնում

Մշակույթ

Երեխաների հոգեւոր դաստիարակության եւ աջակցության «Տիկնիկ» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է Գրիշա Մարգարյանի նախաձեռնությամբ 2008թ. հունիսի 1-ին: Երկու տարի դռներու ընկնելուց հետո, Կապանում գործող ոչ մի հիմնարկ-ծեռնարկությունից աջակցություն չստանալով՝ 2010թ. պատրաստի ծրագրով դիմել է «Վորլդ վիժն Հայաստան» կազմակերպության Կապանի տարածքային զարգացման գրասենյակին: Վերջինս ծրագիրն ուղարկել է Շվեյցարիա, որտեղ էլ այն հավանության է արժանացել: Արդյունքում ձեռք են բերել 40 տիկնիկ եւ անհրաժեշտ սարքավորումներ: Ըստ պայմանավորվածության՝ «Տիկնիկ»-ը պիտի հանդես գար հոգեւոր ներկայացումներով՝ «Սուրբ ծնունդ» եւ «Սուրբ գատիկ»:

Հլի-ի հետ համագործակցելու պատրաստակամություն հայտնեց Կապանի N6 հիմնական դպրոցը, որի 3-4-րդ դասարանի աշակերտներն ընդգրկվեցին դերասանական կազմում:

Մինչ այժմ փոքրիկ տիկնիկավարներն այդ դպրոցի սաներն են: Ի դեպ, դպրոցի տնօրեն Մարինե Դավթյանը ստեղծման օրվանից աջակցել է հլի-ին. տեւական ժամանակ ներկայացման նախապատրաստական աշխատանքների մի մասը դպրոցում է իրականացվել:

Այնուհետև «ԱՄՆ խաղաղության կորպուս/Հայաստան» ծրագրի կամավոր Ջոյը տեսավ ներկայացումները եւ շատ հավանեց՝ առաջարկելով ծրագրի ներկայացնել ԱՄՆ դեսպանատուն, որ այդ ժամանակ իրականացնում էր «Դեռնկրատ երկիր» գրանտային ծրագիր: Ջոյի խորհրդով ներկայացրին ծրագիր, որի քննարկման սկզբնական փուլում թերահավատության արժանացավ: Բայց մանրամասն ուսումնասիրելուց հետո հասկացան, որ դեռնկրատիան, նախեւառաջ, պետք է սերմանել երեխաների մեջ, եւ երեք ներկայացում պատրաստեցին՝ կաշառակերպության, բնության պահպանության, ստի եւ կեղծիքի թեմաներով: 2012թ. վերջային միջոցով ծանոթանալով «Տիկնիկ»-ի գործունեությանը՝ «Գյուլբենկյան» հիմնադրամի խորհրդատու Արմինե Իշխանյանը Կապանում տեսավ ներկայացումները եւ առաջարկեց դիմել «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամին հստակ ծրագրով: Ծրագրի հիմնական նպատակը երեխաներին քաղաքացիություն սովորեցնելն է, մանկուց նրանց մեջ սերմանելը, որ նա իր երկրի լիարժեք քաղաքացին է: Արդյունքում «Ասպետների մենամարտը», այնուհետև Եվգենի Շվարցի «Վիշապը» քաղաքական բնույթի հետաքրքիր ներկայացումներ արեցին, որ հավանության արժանացավ, եւ հիմնադրամն առաջարկեց շարունակել հովանավորությունը, իսկ 2014 թվականից մշտական հովանավորության պայմանագիր կնքեցին: «Մեր խաղաղությանը ընդգրկում ենք այն գործերը, որոնք ժամանակին եւ մեր երկրի իրավիճակին հա-

Ակնարկ

«Կարյուշայի» զանգեզուրցի հրամանատարը

Շմահունջ են՝ դրանով մատաղ սերնդի մեջ որոշակի աշխարհայացք ձեռնվորելու նպատակով», – նշում է Գ.Մարգարյանը:

Հասարակության մեջ այն կարծիքն է իշխում, որ տիկնիկային թատրոնը միայն փոքրերի համար է նախատեսված: Բայց թատրոնի խաղացանկում կան այնպիսի գործեր, որոնք մեծահասակների համար են: Ժամանակին տիկնիկային թատրոնի հիմնադիրներից Սերգեյ Օբրագովի ներկայացումները, մանավանդ «Աստվածային կատակերգություն»-ը եւ «Դոն ժուան»-ը, որոնք նախատեսվել էին 18 տարեկանից բարձր անձանց համար, մեծ հետաքրքրություն են վայելել:

2014թ. հլ կախազահ Գրիշա Մարգարյանի առաջարկով ներկայացումներում ներառվեցին հաշմանդամները: Սա բավականին համարձակ քայլ էր, որ պակվեց հաջողությամբ: Նրանց հետ աշխատելու հիմնական դժվարությունը ֆիզիկական բնույթի է, բայց նրանց մեջ աշխատելու ցանկությունն այնքան մեծ է, որ առաջացած խնդիրները հեշտությամբ հաղթահարվում են: «Մեծ բավականությամբ են աշխատում, ամենակարեւորը՝ իրենց լիարժեք են զգում, մանավանդ երբ շտապում են՝ ասելով՝ աշխատանքից ուշանում եմ: Աշխատելու ընթացքում ինձ համար տարբերություն չկա, եթե եկել է աշխատանքի, ուրեմն պիտի լիարժեք մասնակցի դրան. սա նրանց համար ամենամեծ ձեռքբերումն է», – ոգեւորությամբ նշում է Մարգարյանը: Բացի դրանից՝ չնոռանանք, որ դրանով համարավորություն է տրվում բարելավելու հաշմանդամների նյութական վիճակը, մանավանդ մեր երկրում, երբ նրանց համար սահմանված թուշակը բավարար չէ նույնիսկ նեցուղային կարիքները հոգալու համար:

Հլ-ում ներկայումս աշխատում է 27 հոգի, բացի Կապանից, որ կենտրոնն է, գործում է եւս երեք մասնաճյուղ՝ Գյումրու (Հայաստանի մշակույթի կենտրոն), Ալավերդու (հեռավոր մարզի քաղաք) եւ Շուշիի (Պարաբաղի մշակույթի կենտրոն): «Մեր երկրի քաղաքականության ամենամեծ բացթողումներից մեկը, թերեւս, ամեն ինչ մայրաքաղաքում կենտրոնացնելու «նյուլոքն» է: Ես կարծում եմ, որ երկրի զարգացման կարևոր երաշխիքներից մեկը ծայրամասերը զարգացնելն է», – նշում է հլ նախագահը:

Ներկայացումներն անվճար են կազմակերպում, հարցին, թե ինչու դրանք վճարովի չեն, պատասխանեց՝ հարկային դաշտի հետ «համագործակցել» չենք ուզում:

Հետաքրքիր մի իրողություն, այնուամենայնիվ, չենք կարող չնկատել. Կապանում գործող տիկնիկային թատրոնի մասին գիտեն աշխարհի տարբեր երկրներում, բայց մարզկենտրոնում շատերը նույնիսկ տեղյակ չեն դրա գոյության մասին: Թերեւս, պատճառը մշակութային կյանքի հանդեպ ծայրահեղ անտարբերությունն է: «Համաքաղաքային միջոցառումներին մշտապես նույն պարային եւ երաժշտական կատարումներն են, այնինչ մեր խաղացանկում թե՛ մանուկների եւ թե՛ մեծահասակների համար ունենք ներկայացումներ, որոնք, համոզված եմ, մեծ ոգեւորությամբ կընդունի հանրությունը: Բազմազանությունը մեզանում գրեթե բացակայում է», – մտահոգվում է Գ.Մարգարյանը:

Հովանավորությունը միայն «Գյուլբենկյան» հիմնադրամից է: Հիմնադրամն օրվանից «Տիկնիկ»-ի գերխնդիրը եղել է մնում է սեփական տարածք ունենալը, կատարված աշխատանքը տարբեր քաղաքներում, փառատոների

Կյանքիս ընթացքում, սկսած դպրոցական տարիքից, հարգել եմ պատերազմում զոհվածների հիշատակն ու հաղթանակով վերադարձածներին: Նրանք ինձ համար հերոսներ են: Շատ գրքեր են կարդացել այդ թեմայով եւ շարունակում եմ կարդալ: Մոտ 30 զեկուցում եմ կարդացել մայիսի 9-ի կապակցությամբ, մամուլում հոդվածներ եմ հեղինակել, գիրք եմ հրատարակել: Պատրաստ է տպագրության եւս մեկ գիրք՝ «Հուշագիրք Մեծ հայրենական զոհված զանգեզուրցիների»:

Ավարտվելու վրա է «Ձանգեզուրցիները Մեծ հայրենականում եւ աշխատանքում» մենագրությունը:

Մեծ հայրենականի մասնակիցներից մեկի՝ Սամսոն Հակոբյանի մասին է տույն ակնարկը:

Սամսոն Հակոբյանը ծնվել է 1918թ. Գորիս քաղաքում, բազմազավակ ընտանիքում:

Ընտանիքն ունեցել է տասը ժառանգ՝ յոթ տղա, երեք աղջիկ: Դրանցից ութը վաղաժամ զոհվել է կյանքից: Ժառանգներից ողջ են մնացել մեծը՝ Աշխենը, եւ փոքրը՝ Սամսոնը: Սամսոնը երկու տարեկան էր, երբ մահացավ հայրը: Աշխենն ամուսնացավ եւ ընտանիք կազմեց Սամարղանդում: Մի քանի անգամ փորձ արեց մորը եւ եղբորը Գորիսից տեղափոխել Սամարղանդ՝ բնակություն հաստատելու: Իսկ երբ մայր ու որդի մեկնեցին Աշխենի տեսակցության, աղջկա խնդրանքը մերժեցին՝ ասելով՝ Գորիսը մեր հարազատ ծննդավայրն է, մենք Գորիսից հեռանալ չենք կարող...

Մայրը խնամքով ու գուրգուրանքով պահում է մեծացնում է մինուճար որդուն, տալիս ուսման:

Սամսոնը նախնական կրթությունն ստացավ ծննդավայրում՝ առաջադեմ գիտելիքներով, օրինակելի վարքով: Դպրոցական տարիներին կողմնորոշվեց մանկավարժ դառնալ՝ մոր հետ խորհուրդ անելով: Ցանկությունը եւ նպատակը իրականանում են, երբ բարձր առաջադիմությամբ սովորում եւ ավարտում է Գորիսի մանկավարժական ուսումնարանը: Նույն տարիներին մանկավարժական ուսումնարանը, կարելի է ասել, բուհին հավասար գիտելիքներ էր տալիս: Այդ կրթության է լրացրել Ձանգեզուրի բոլոր բնակավայրերի դպրոցների մանկավարժների պահանջարկը: Նորավարտ Սամսոնի գործուղում են Գորիսի շրջանի Տեղ գյուղի միջնակարգ դպրոց՝ աշխատելու պատմության ուսուցիչ: Հաջորդ ուսումնական տարում՝ 1938-39թթ., նշանակվում է Գորիսի դպրոցներից մեկում՝ դարձյալ պատմության ուսուցիչ: Ուրախ էր երիտասարդ մանկավարժը, հպարտ էր, չնայած ուսումնառության տարիներին պատմության մասին տխուր հաղորդումներ է ունկնդրել:

Երիտասարդ մանկավարժ Սամսոն Հակոբյանը սիրած աղջիկ ուներ Գորիսի մանկավարժական ուսումնարանում: 1939թ. օգոստոսին ամուսնանում է նրա հետ: Նա էլ դպրոցի աշխատող էր, ուսուցչուհի: Գորիսից էր՝ Օրոյանների հայտնի գերդաստանից:

Ընտանիքի ուրախությունը երկար չի տևում: Նույն տարվա աշնանը Սամսոնը զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության:

Առողջ էր եւ հպարտ: Հպարտ էր, որ գնում է հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելու:

Սովետաֆիննական սահմանում քաղաքական, ռազմական եւ ֆիզիկական կոփածությունն ստանալուց հետո զինվորին տեղափոխում են արեւմտյան Բելոռուսիայի Պոլոցկ քաղաք:

1941թ. հունիսի 18-ին հրամանատար Մաշկովը՝ բնիկ կրասնոդարցի, կանչում է Սամսոն Հակոբյանին եւ Վահան Գյուլամբարյանին (Գորիսի խնձորեսկ գյուղից)՝ ասելով՝ «Դուք 89-րդ հակատանկային բրիգադի կարգապահ եւ գրագետ զինվորներից եք, հրամանատարությունը որոշել է ձեզ ուղարկել Սմոլենսկ՝ ականանետային ուսումնարանում սովորելու: Շուտով պատերազմ է սկսվելու, իսկ մենք հրամանատարներ քիչ ունենք»:

Ծառայության մեջ գտնվող Սամսոնի զորացրվելուն քիչ էր մնացել: Բայց ահա հունիսի 22-ին ամեն ինչ փոխվում է: Սամսոնն ու Վահանն արդեն Սմոլենսկի ռազմական դպրոցում են, իսկ գերմանական բանակի հրամանատարությունը հսկայական ուժեր է նետել քաղաքի վրա: Սմոլենսկը երկաթգծի կարևոր հանգույց էր: Այս մասին մարտիկը լսել էր ուսումնարանի ղեկավարից՝ Նովիկովից: Երկու ամիս շարունակ Սմոլենսկը կրակե կարկուտի տակ էր: Թե՛ մարտերի մեջ էր ինքը՝ Սամսոնը: Ուսումնարանում սովորող զինվորներն ակտիվորեն մասնակցում են քաղաքի պաշտպանությանը: Մարտերը թե՛ էին: Վյազմայի ուժեղ կոնտրառիկ ժամանակ ուղեք վիրավորվում է Սամսոնը:

Ծանր վիրավոր զինվորներին տեղափոխում են Մոսկվա, այդ թվում՝ Սամսոնին: Մոսկվայի զինվորական հոսպիտալում շատ թեքիչ բուժում ստանալուց հետո տեղափոխում են Պետրոզավոդսկ՝ Կարելական ճակատ: Կարճ ժամանակ չանցած՝ նա քաղաքի տեղական էր: 1941թ. վերջին ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը: 1942թ. Սամսոն Հակոբյանին գործուղում են Մոսկվա՝ մասնակցելու մոր զինատեսակի՝ ռեակտիվ ակամանետի յուրացման դասընթացներին:

Երկամյա դասընթացի ավարտից հետո Հակոբյանին տրվում է ավագ լեյտենանտի կոչում ու նշանակվում ակամանետային մարտկոցի հրամանատար: Պատերազմի ավարտից հետո հայտնի դարձավ, որ Սամսոնը Հայաստանից զինատեսակի մարտկոցի միակ հրամանատարն է եղել, իսկ Սովետական Միության մասշտաբով՝ առաջիններից մեկը: 17-րդ բրիգադը կազմ ու պատրաստ էր ռազմական գործողությունների համար: Գերմանական զորաբանակները պաշարել էին Լենինգրադը: Նրա հետ կապող միակ ճանապարհը, ինչպես հայտնի է, սառցակալած Լադոգա լիճն էր, որ հետագայում անվանեցին «Կյանքի ճանապարհ»:



|| Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ պարտքս համարեցի պատմել Սամսոն Հակոբյանի մասին...

17-րդ բրիգադը «Կյանքի ճանապարհը» պաշտպանողներից էր: Երկու ամիս լքի պաշտպանական դիրքերում մնալուց հետո հրաման է տրվում տեղափոխվել Ստալինգրադ: Այնտեղ բախտորոշ ճակատամարտեր էին ընթանում: Բազմաթիվ ու բազմատեսակ զենքերի համազարկերի մեջ լսելի էին լեգենդար «Կատյուշայի» համազարկերը, որից սարսափահար էին լինում գերմանացիները: «Կատյուշայի» հրամանատարն այստեղ թեթևակի վիրավորվում է: Նա դիմանում է դրան ու դուրս չի գալիս մարտադաշտից: Ծանր ու սհավոր մարտեր էին գնում Երզովկայում: Սամսոն Հակոբյանին հրավիրում են Մոսկվա՝ խորհրդակցության: Նպատակը մեկն էր՝ անցնել վճռորոշ գործի, ազատագրել Ստալինգրադը:

Պետք է նշել, որ սովետական ուժերը Ստալինգրադում բացարձակապես գերակշռում էին: Այդտեղ շրջապատման մեջ դրվեց գերմանական 330 հազարանոց խմբավորումը: Գերագույն հրամանատարությունը հրաման արձակեց ոչնչացնել թշնամու զորքերը եւ մնացորդներին թշել 150-200 կմ հեռու: Ֆաշիստական բանակը Ստալինգրադում թողեց 147 հազար դիակ:

Սամսոն Հակոբյանն իր «Կատյուշայի» համազարկերով մասնակցեց Լենինգրադի, Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի եւ այլ նշանավոր ճակատամարտերի: Ակտիվորեն մասնակցեց եվրոպական երկրների՝ Լեհաստանի, Չեխոսլովակիայի ազատագրման համար նվաճող մարտերին:

1945թ. գարնանը սկսվեց վերջին գործը մայրաքաղաք Բեռլինի վրա: Վերմախտը վերջին ուժերը կենտրոնացրել էր Բեռլինում եւ նրա մերձակայքում, սակայն դա էլ չօգնեց ֆաշիստներին՝ փրկվելու անվերապահ կապիտուլյացիայից:

1945թ. մայիսի 8-ին «Կատյուշայի» հայորդի հրամանատարը հաղթանակի բերկրանքը վայելողների շարքերում էր: Մայիսի վերջին մեկամյա արձակուրդ է ստանում եւ գալիս տուն: Խաղաղ պայմաններում,

րում, առաջին անգամ, հարազատ ընտանիքում նստում են համեստ սեղանի շուրջ:

Առավոտյան Լաստի խուֆի բարձունքից արելի ջերմացնող շողերը դանդաղորեն տարածվում են Գորիսի վրա: Խաղաղ են երկիրն ու երկինքը: Դադարել են «Կատյուշայի» համազարկերը: Գորիսյան մաքուր օդը եւ վարդաստանի բույրը գեղեցիկ են հրամանատարին: Սեփական պարտեզում կնոջ՝ Սիրանուշի հետ, քայլում է կանաչ գորգի վրա, ու յոթ տարվա կաղապարված կարտուհոգու մեջ ծիծաղ է արթնացնում:

Արձակուրդը լրանալուց հետո Սամսոնը վերադառնում է զինվորական շարք, կինը՝ իր հետ: Չորամասը եղբայրական Բելոռուսիայում էր:

...Սեկ տարի խաղաղ պայմաններում ծառայելուց հետո՝ 1946թ. հուլիսին, զորացրվում է «Կատյուշայի» հրամանատարը՝ մայրորդ կոչումով, 22 շքանշան ու մեդալ կրծքին:

Սեկ առ մեկ հիշում էր, թե որն ինչի համար էր երբ է ստացել: Հաճախ էր պատմում, որ 1949թ.՝ Կրեմլում, «Կարմիր աստղ» շքանշանն իր կրծքին ամրացրել է Մ.Կալինինը: Հրավիրված բարձրատիճան հրամանատարները խմբով նկարվեցին: Կենտրոնում Մ.Կալինինն է՝ առաջին շարքում, նրանից աջ՝ Սամսոն Հակոբյանն է: Այդ նկարը պահպանվել է:

Չգանկանալով անավարտ թողնել մանկավարժի գործը՝ շարունակում է աշխատանքը Գորիսի դպրոցներից մեկում՝ ուսուցիչ: Հետո սովորում եւ ավարտում է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Դրանից հետո Լենինգրադում սովորում եւ ավարտում է առեւտրի դպրոցը: Պատրաստի կազմակերպիչ էր, հասարակական-քաղաքական ակտիվիստ: Դասավանդել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում, հետո նշանակվել Գորիսի քաղկոտայի նախագահ, այնուհետեւ աշխատել շրջանային սպառողական կոոպերացիայի նախագահի տեղակալ, գյուղակայության կարգերի բաժնի վարիչ, Տաթևիկչինի բանատեղափոխության կառուցման ղեկավար, ընտանիք են կազմում, ապրում են Երեւանում:

Ընտանիքը տեղափոխվում է Երեւան. մոր կյանք է սկսվում: Նրա հինգ ժառանգը՝ բարձրագույն կրթությամբ, ընտանիք են կազմում, ապրում են Երեւանում:

...Նրա երեսնյան բնակարանում են: Գնացել են տեսակցության: Ուրախությամբ կարդում էր «Պրավդա» թերթը: Ամուր բռնեց ձեռքս եւ ասաց՝ Արմենս 27 տարեկան է: Մոսկվայում պաշտպանել եւ ստացել է իրավաբանության դոկտորի կոչում:

Հենց այդ մասին կարդում էր «Պրավդա» թերթում: Խնդրեցի եւ այդ թերթը վերցրի: Մեկական բաժակ թթի օղիով շնորհավորեցինք թոռնիկ Արմենին՝ գիտության դոկտորի կոչում ստանալու կապակցությամբ:

Սամսոն Հակոբյանը սերտորեն կապված է եղել հայ գրողների հետ: Ամենօրյա շփման մեջ էր Սերո Խանդավազի հետ, մանկության ընկերներ են եղել: Ընկերություն է արել Մկրտիչ Մարգարյանի, Համո Սահյանի, Դրաշյա Հովհաննիսյանի, Վազգեն Մնացականյանի եւ ուրիշների հետ:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ պարտքս համարեցի պատմել Սամսոն Հակոբյանի մասին, մահվանից տասը տարի անց վերիիշել նրա ծառայությունները հայրենիքի հանդեպ՝ դրանով արտահայտելով մեր հարգանքը ծանրահաղթ այդ պատերազմի բոլոր վետերաններին եւ խոնարհվում՝ զոհվածների հիշատակի առջեւ:

Կարծիքների խաչմերուկ

Տեղական հանրաքվե. ի՞նչ կրա համայնքների խոշորացումը

նչ մի արդյունք չի տալու: Ավելի նպաստավոր էր ժողովրդի համար, որ այն, ինչն այսօր ցանկանում են անել, իրականացնեն ԽՍՀՄ-ը փլուզվելուց հետո: Որովհետև 20 տարի առաջ կառավարության որոշմամբ տեղական ինքնակառավարման համակարգը փոշիացրել է գյուղերը: Եթե 20 տարի առաջ մեր գյուղի դպրոցի առաջին դասարան էր հաճախում 40, իսկ այժմ՝ չորս աշակերտ, մի՞թե փաստն ասվածի ապացույցը չէ: Սա մի ողբերգություն է, որ սահման չունի:



րացումից հետո կառավարությունը գործ անի տվյալ համայնքում, ողջունում են բարեփոխումը, բայց միևնույն ժամանակ, երբ աշխատատեղեր են կրճատվում, ափսոսում են, որ այդ մարդիկ գրկվելու են իրենց գոյության պայմաններից: Ամենամեծ մտահոգությունն այն է, որ համարում, որ մի քանի մարդ ես մնալու է առանց աշխատանքի:

Լավ է գոնե, որ յուրաքանչյուր գյուղում լինելու է լիազոր ներկայացուցիչ, յուրաքանչյուր գյուղացի իրեն հուզող հարցով դիմելու է նրան, ժողովուրդն ավելի շատ մտահոգվում է տեղեկանք ստանալու հարցով, կարծում են՝ քաղաքացի-տեղական իշխանությունները չփորձում են լսել իրենց: Վերջին տարիներին բյուջեի միջոցներով ոչ մի աշխատանք չէր կատարվում, գործ չէր արվում, միայն աշխատավարձ են վճարել, համայնքային բյուջեն մախ դժվարությամբ է ձեռավորվում, սեփական եկամուտները դժվարությամբ են հավաքում, նույնիսկ մենք էլ ենք ընդգրկվում այդ գործընթացում, դրա մեջ էլ խնդիր չեն տեսնում, հիմնականում ինչ որ արվում է, արտաբյուջետային միջոցների հաշվին է կատարվում, օրինակ, մեր դպրոցի նորոգումը, որ կատարվեց «Տաթև» ճոպանուղու եւ սոցիալ-դրամների հիմնադրամի հատկացրած միջոցներով: 1996 թվականից

տնօրեն են, եւ յուրաքանչյուր տարի իմ մտահոգությունն է եղել, որ այս դպրոցը նորոգվի: Վերջապես մեր վաղեմի ցանկությունն իրականություն է դարձել:

Ծրագիրը խիստ ռիսկային է համայնքի ղեկավարի ընտրության հետ կապված: Կենտրոնը կլինի Շինուհայրը, թե Յալիձորը, ինձ համար միևնույն է, միայն արժանավոր մարդիկ լինեն գյուղապետի եւ վարչական ներկայացուցչի պաշտոններում: Մտավախություն ունեն, որ գյուղապետին ընտրելիս դժվարություններ են ծագելու: Յուրաքանչյուրն իր պարտքն է համարելու համագյուղացուն ընտրել, գլուխ է բարձրացնելու տեղային հայրենասիրությունը: Բացի այդ՝ Շինուհայրից ընտրված գյուղապետը պիտի իմանա, ասենք, հարժիսեցու հոգեբանությունը, համայնքի հիմնախնդիրները, այնքան կազմակերպված ու ողջամիտ լինի, որ ուշքի բերի այդ համայնքները:



ՆՎԵՐ ՎԱՐՈՒՆՅԱՆ

Ավարանց գյուղի դպրոցի տնօրեն

Ըստ իս համայնքների խոշորացումը դատարկվող գյուղերը փրկելու ճիշտ տարբերակն է: Մարտի 31-ին մեր համայնքում էին 33 տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարը ու

Սյունիքի մարզպետը: Գյուղի բնակչության իրազեկելն են համայնքների խոշորացման մասին, ներկայացրել դրա դրական հեռանկարը: Հուսահորդն այն է, որ միավորվող գյուղերը լիազոր ներկայացուցիչներ են ունենալու, որոնք ներկայացնելու են համայնքի հիմնախնդիրները: Կառավարության անդամները հավատարմացրել են, որ միավորվելուց հետո համայնքներում ծրագրեր պիտի իրականացվեն: Իսկ որ մեր համայնքում բազում պրոբլեմներ կան, այդ մասին ձեր թերթը ծավալուն հոդվածով անդրադարձել է երկու ամիս առաջ: Բայցեւայնպես առիթը բաց չեն թողնում եւս մի անգամ իշխանություններին հիշեցնել համայնքի առջև ծառայած երկու լրջագույն հիմնախնդիրը՝ առաջինը՝ դպրոցի վթարային վիճակն է, երկրորդը՝ խմելու ջրի բացակայությունը:



ՎԱԼԵՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խոտի դպրոցի ուսուցիչ

Անձամբ ես թերահավատ եմ: Ծրագիրն այնպես են ներկայացնում, թե համայնքների խոշորացումն առաջընթաց է ապահովելու: Ինքս լավատեսության հիմք էլ չունեն, ավելին՝ կարծում եմ, որ դրանից հետո դեպի վատն ենք գնալու: Քաշունիում քսան հոգի է բնակվում: Ինչ կարիք կա նման սակավաթիվ գյուղը պահել: Եթե այդ հիմունք էլ կրճատվեն, տակը մարդ չի մնում: Թող կենտրոնը Քաշունիում լինի, այդ հիմնք հոգին էլ բարձր աշխատավարձով իրենց ընտանիքներով կբնակվեն գյուղում, գյուղը կշնչի, օգուտը դա կլինի: Կենտրոնը դարձնում են Շինուհայրը, որն էլ փոքրի-

շատե ենթակառուցվածքներ ունի: Կարող է՝ կառավարությունն ավելի հեռագնա նպատակներ ունի, չգիտեմ, ինձ կարծիքով ծրագիրը տանելու է ոչ թե գյուղերի բարգավաճմանը, այլ ամայացմանը: Այդպես են մտածում: Կարող է եւ շատ լավ լինի, ժամանակը ցույց կտա:

Ասում են, համայնքները խոշորացնում են, որ ֆինանսական միջոցները կենտրոնացնեն եւ ավելի արդյունավետ օգտագործեն: Բայց ի՞նչ երաշխիք, որ բոլոր ներդրումները հավասարապես կբաշխվեն: Որքան համայնքը մեծ է, հիմնախնդիրներն ավելի շատ են: Բայց նվազ բնակչություն ունեցող համայնքներն էլ քիչ պրոբլեմներ չունեն: Շինուհայրն արդեն կայացած համայնք է, թող կենտրոնը Յալիձորը, Տաթևը կամ Խոտը լինի: Օրեր առաջ կառավարությունից մարդիկ էին եկել, չեն ասում, որ լավ է լինելու, ասում են՝ փորձում ենք, կարող է՝ լավ լինել: Բայց հնարավոր է, որ լավ չլինի, չէ՞:

Ինչպես երեւում է, հարցվողների կարծիքը միանշանակ չէ: Ասվածին ուզում ենք հավելել հանրապետական մամուլից («Ազգ», 27 մարտի 2015թ.) քաղված մի տեղեկատվությամբ. ըստ համայնքների խոշորացման ծրագրի փորձագետների՝ փոքր՝ մինչեւ 100 բնակիչ ունեցող համայնքներում ոչ մի ծառայություն չի մատուցվում, եւ համայնքային բյուջեի 88 տոկոսը ծախսվում է աշխատավարձի վրա՝ գյուղապետի, աշխատակազմի քարտուղարի եւ այլն: Միայն 3000 եւ ավելի բնակչություն ունեցող համայնքներում է, որ ծախսերի 20 տոկոսը բաժին է ընկնում աշխատավարձերին, իսկ մնացած գումարով հնարավոր է լինում ծառայություններ մատուցել համայնքում ընդգրկված բնակավայրերում՝ մանկապարտեզ, բուժօգնություն, մշակույթի տուն, փողոցների լուսավորություն եւ այլն: Իսկ խնայված միջոցները մնալու են նույն գյուղերում նշված ծախսերն իրականացնելու, այլ ոչ թե պետական բյուջե կամ որեւէ այլ նպատակի ծառայելու: Ինչպես ասում են՝ կապրենք կտեսնենք:

ՎԱՐՈՒՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՇՈՒՆԱՆԻԿ ԳԱՐԻՒԵԼՅԱՆ

Յալիձորի միջնակարգ դպրոցի տնօրեն

Մի խոսքով՝ գյուղի առջև ծառայած խնդիրները մի բան են, նախատեսվող բարեփոխումները՝ մի այլ բան. իրար հետ ոչ մի կապ չունեն: Գյուղապետը Շինուհայրում է նստելու, թե Յարժիսում, դրանով գյուղի վիճակը չի փոխվելու:

Կայացավ «Տաթև» ազգային պարկի եւ Կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծման ծրագրերի քննարկման մեկնարկային հանդիպումը

Սամուկի հաղորդագրություն

կի ստեղծման նախաձեռնությունը, նշել է. «Նախատեսվող «Տաթև» ազգային պարկի տարածքը բնութագրվում է հարուստ եւ եզակի մշակութային ու բնական ժառանգության վայրերով, ինչի շնորհիվ տարածքը դարձել է Հայաստանում զբոսաշրջության առանցքային վայրերից մեկը: Ազգային պարկի ստեղծումը ոչ միայն կապահովի այդ տարածքի էկոհամակարգերի եւ հարուստ կենսաբազմազանության պահպանությունը, այլ նաեւ կխթանի զբոսաշրջության հետագա զարգացումը, ինչպես նաեւ կնպաստի հարակից համայնքների սոցիալ-տնտեսական

զարգացմանը: Հաջողություն մտղթելով ծրագրերի իրականացմանը՝ ցանկանում են հավաստիացնել, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը պատրաստ է արդյունավետ համագործակցել ծրագրերի իրականացման հետ կապված բոլոր հարցերում»:

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի տնօրեն Արմեն Գեւորգյանը, կարեւորելով այս ծրագրի նշանակությունը IDeA-ի համար, նշել է. «Հիմնադրամը փորձում է Հայաստանում եւ Արցախում իրականացվող բոլոր ծրագրերն անպայման զուգակցել բնապահպանական բաղադրիչի հետ: Այդ իմաստով այս ծրագիրն առաջինն է մեզ համար, եւ կարելի էր ենք դրա հաջող իրականացու-

մը»: Նա նկատել է, որ բացառիկ համագործակցության ձեւաչափ է ստեղծվում, երբ հասարակական կազմակերպությունները, պետական մարմինների, տեղական եւ տարածքային կառավարման մարմինների հետ, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ նման ծրագրեր են կյանքի կոչում: «Համոզված եմ, որ այս ձեւաչափ կարող է օրինակ ծառայել տարածաշրջաններում նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար», - ընդգծել է նա:

Հայաստանում Գերմանիայի փոխդեսպան Նադիա Լիխտենբերգերը նշելով, որ Գերմանիայի կառավարությունն աջակցում է ծրագրերի իրականացմանը, գոհունակություն է հայտնել, որ բացի կենսաբազմազանության պահպանությունից, ծրագիրը նաեւ նպաս-

տելու է համայնքների զարգացմանը: Նա հետագա հաջողություններ է մտղթել ծրագրի իրականացմանը՝ կարեւորելով ներգրավված բոլոր կողմերի միջեւ սերտ համագործակցությունը:

WWF-Հայաստանի տնօրեն Կարեն Մանվելյանը, շնորհակալություն հայտնելով «Տաթև» ազգային պարկի ստեղծման նախաձեռնությանն աջակցող բոլոր կազմակերպություններին, իր ելույթում նշել է. «Հարավային Հայաստանը կենսաբազմազանության տեսանկյունից հանրապետության ամենահարուստ տարածաշրջանն է: Ծրագրի գործողությունները պլանավորված է իրականացնել Հայաստանի երկու ուշագրավ տարածքներում՝ դիտարժան Որոտանի կիրճի շրջակայքում եւ Վայոց ձորի լեռներում, որտեղ տեղակայված է երկրի բնական եւ մշակութային հարուստ ժառանգություն: Համայնքային բնապահպանական տարածքների ստեղծումը կօգնի հակազդելու բնական ռեսուրսների անկայուն օգտագործման բացասական հետեւանքներին, ՀՔՏ-ի մոդելները կմշակվեն՝ հիմք ընդունելով էկոհամակարգային ծառայությունները, որոնք հանգեցնում են կենսաբազմազանության պահպանմանը եւ տեղական համայնքների լրացուցիչ եկամտի աղբյուրներին՝ արդյունավետ կառավարվող պահպան-

վող տարածքների, էկոտուրիզմի, ապրանքների մշակման եւ շուկայախանման, արտավայրերի եւ կենսամիջավայրերի մասնակցային կառավարման միջոցով»:

Կարեն Մանվելյանի եւ «Կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի համակարգող Վասիլ Անանյանի կողմից ծրագրերի մանրամասները ներկայացնելուց հետո շահագրգիռ քննարկում է տեղի ունեցել մասնակիցների միջեւ:

Ծրագրերի շրջանակներում նախատեսվում է Տաթև համայնքում հիմնել տեղական արտադրանքի մթերման, պիտակավորման, փաթեթավորման եւ պահեստավորման կետ, որը կհագեցվի անհրաժեշտ սարքավորումներով, կստեղծվեն էկոտուրիզմի ենթակառուցվածքներ, այդ թվում՝ տեղեկատվական կենտրոն Տանձատափ համայնքում:


Ծրագրերը ֆինանսավորում են «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամն ու Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարությունը (BMZ) եւ իրականացվելու են WWF-Հայաստանի կողմից՝ սերտորեն համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ:

ՀՀ բնապահպանության նախարարություն
28 ապրիլի 2015թ.

Մշակույթ

Կապանում փեւական ժամանակ գործող փիկնիկային թափրոնը, կարծեք, սպվերում է մտում

Էջ 4
Ներկայացնելու համար հովանավոր գտնելը. չէ՞ որ այդպիսով նախեստառաջ Կապանի անունն է հնչում: «Տարիներ առաջ հովանավոր էինք գտել, որ պատրաստ էր մեզ համար ելրոպական չափանիշներին համապատասխան թատրոն կառուցել, բայց քաղաքում համապատասխան տարածք մեզ չտրամադրեցին՝ պատճառաբանելով, որ ազատ տարածք չկա: Մենք հիմա նույնիսկ միջոց չունենք մոտակա գյուղում ներկայացում տալու համար», - նշում է նա:



Գրիշա Մարգարյանը ծնվել է 1958թ. հոկտեմբերի 31-ին Գյումրիում՝ բնիկ գյումրեցիների ընտանիքում: 1976թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Գյումրու թատրոնի կից թատերական ստուդիա՝ ուսանելով Երվանդ Ղազանչյանի, այնուհետև Գրիգոր Սկրտչյանի մոտ: Վերջինիս շնորհիվ նրա համակուրսեցիները դարձան դերասաններ, ռեժիսորներ: «Դերասանի համար բնավ կարելու չէ ինստիտուտ ընդունվել, կարելու էր տաղանդ ունենալն է՝ սկզբունքով առաջընդվելով չի շարունակել ուսումը թատերական ինստիտուտում: Շատ կարճ ժամանակ աշխատել է Գյումրու տիկնիկային թատրոնում, որից հետո տեղափոխվել Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն: Մինչ այդ նկարահանվել է «Եռանկյունի», «Չեղկոմի նախագահ», «Կտոր մը երկինք» ֆիլմերում: 2013թ. նկարահանվել է Արամ Շահբազյանի «Մոսկվիչ, իմ սեր» հայ-ռուս-ֆրանսիական համատեղ արտադրության ֆիլմում:

100-ից ավելի դերեր է խաղացել թատրոնում, բայց տիկնիկային թատրոն հիմնելու գաղափարը միշտ ունեցել է: 1980թ. փորձեց Կապանում բացել տիկնիկային թատրոն, բայց աջակցություն չգտավ: Շատ է կարելոնում Սարտրի «Երեքը դժոխքում» ներկայացման մեջ մարմնավորած դերը: Ի դեպ, սա խորհրդային տարիներին համարվում էր սենսացիոն ներկայացում բաց տեսարանների համար, եւ ներկայացումը երկար կյանք չունեցավ:

Որոշ ժամանակ հեռացել է թատերական աշխարհից՝ կատարելով տարբեր աշխատանքներ: 2008թ. հիմնել է «Տիկնիկ» հասարակական կազմակերպությունը եւ մինչ այժմ զբաղվում է թատրոնի կայացմամբ:

ԱՄՆ-ից Մարինա Ներսիսյանը փոքր հիմնադրամ էր բացել եւ հավաքած գումարով ֆունկցիոնալ տիկնիկներ ուղարկել: Նշենք, որ մարդկանց ոգեւորում է հատկապես հաշմանդամ տիկնիկավարների՝ աշխատանքին ներգրավվածությունը: «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի հայկական համայնքն-

նի բաժանմունքի տնօրեն Ռազմիկ Փանոսյանի տեղեկացմամբ՝ տիկնիկային թատրոնի ֆինանսավորումն այլեւս հիմնադրամի ռազմավարական ծրագրերից է: Գլ-ի անդամները սպասում են հյուրախաղերով Պորտուգալիա մեկնելուն:

«Տիկնիկային թատրոնը կարող է հրաշքեր գործել, մեր գործունեության ընթացքում նույնիսկ դեպք է եղել, երբ խոսքի խնդիր ունեցող երեխան, դիտելով մեր ներկայացումը, սկսել է խոսել: Մեկ տիկնիկով ներկայացրածն ավելի մեծ ազդեցություն կարող է թողնել երեխայի վրա, քանի որ միաժամանակ տեսնելով ու լսելով՝ ավելի արագ են յուրացնում նյութը», - նշում է Գ.Մարգարյանը:

Ներկայումս գործող մասնաճյուղերը դեկավարում են հմուտ տիկնիկավարները, որոնց հետ սերտ համագործակցում են: Ի տարբերություն Կապանի՝ նրանք, բացի հիմնադրամից, առանձին հովանավորներ ունեն: Շուշիի մասնաճյուղին աջակցում է ԼԳՂ մշակույթի նախարարությունը, Ալավերդիում՝ առանձին անհատներ:

«Տիկնիկ»-ի «Մասունցի Դավիթ» ներկայացումը, թերեւս, ամենածավալուն աշխատանքն է. 70 տիկնիկ է բեմ բարձրանում, իսկ «Յորիզոն» ստուդիայում կատարված ծայնագրությունը, որին մասնակցեցին Գյումրու թատրոնի դերասանները, ծայնային տպավորիչ ազդեցություն է թողնում հանդիսատեսի վրա:

«Մասունցի Դավիթ»-ը որոշել են ներկայացնել նաեւ տեսածայնակավառակներով եւ տարածել աշխարհի հայաշատ գաղթօջախներում. այստեղ ամենաառաջնային խնդիրը լեզվի պահպանության խնդիրն է:

«Եթե հայ մանուկները չկարդան հայերեն, գոնե լսելով կհաղորդակցվեն մայրենի լեզվին. ցավով պետք է նախազգուշանալ, որ շատերն ընդհանրապես հայերեն չեն հասկանում: Ես կարծում եմ, որ գաղթօջախներում ազգային ներկայացումներով տիկնիկային թատրոնների ստեղծումը ուսուցողական եւ դաստիարակչական մեծ նշանակություն կունենա», - նշում է Գ.Մարգարյանը:

«Ցեղասպանության 100-ամյակին մենք խաղացինք ոչ թե լացուկոծով ներկայացում, այլ «Մասունցի Դավիթ»՝ ցույց տալով, որ իրական հաղթանակի կարելի է հասնել միայն պայքարի միջոցով, բայց

ցավով պիտի մշեն, որ դա հիվանդ գրեթե դատարկ էր», - տեղեկացրեց հի նախագահը:

«Տիկնիկ»-ը զբաղվում է նաեւ բարեգործությամբ. համայնքի բոլոր մանկապարտեզներին, այդ թվում՝ Բարաբաթում բանավանի, վերջերս նվիրել են տիկնիկներ, որոնք, ի դեպ, պատրաստում են տեղում:

«Տիկնիկ»-ի ստեղծմանը ոչ ոք չաջակցեց, բայց ինչպես Գ.Մարգարյանն է ասում, գյուրեցու «թափիթի» ու իր համառության շնորհիվ հասավ տիկնիկային թատրոնի կայացմանը:

Խաղացանկում ընդգրկվում են Գրիշա Մարգարյանի, մեր դասական հեղինակների գործերը, իսկ վերջերս էլ սկսել են ներկայացնել ազգային ավանդազրույցները: Նշենք, որ Գրիշա Մարգարյանի որդին՝ Աշոտ Մարգարյանը, շարունակում է հոր գործը՝ իր ներկայացումներում կիրառելով նորագույն տեխնոլոգիաների հնարավորությունները՝ տեսաձայնային հետաքրքիր որակներ ստանալու համար:

«Մենք չենք ուզում, որ մեր երեխաները միայն անգլերեն խոսեն, - ասում է Գ.Մարգարյանը. - չենք ուզում, որ մեր վզին փաթաթեն օտար մշակույթը, որ ավելի շատ խաթարում է երեխաների հոգեբանությունը: Մենք մարդկանցով կզբաղվենք մասնուկ, երիտասարդ տարիքից, խաղազունարը միշտ կդնենք երիտասարդության վրա, կսկսենք կազմալուծել ու քայքայել, բարոյալքել ու այլասերել, ապականել ու սթոնջել նրան», - նշում է Ալան Ղալեսը ժողովուրդների կրթական մեծագույն ողբերգության ծրագրում: Այդ ինչպե՞ս է ստացվում, որ հայն օտար ափերում հասնում է բարձունքներին: Պատճառն այն է, որ մենք չենք զննահատում մեր արժեքները, հայրենակիցների ձեռքբերումները, հեռացնում ենք լավից, որ մեր վատն ակնհայտ չդառնա: Գործընկեր մեր երկրի մեր մշակույթով, պայքարենք մեր սերունդի ազգային մտածողության ու ոգու պահպանման համար, գնահատենք մեր հոգեւոր արժեքները»:

Կապանում չէ՞ն ուզում նկատել տիկնիկային թատրոնի գործունեությունը, թե՞ պարզապես դրա ժամանակը չէ: Ստացվում է, որ գյումրեցի Գրիշա Մարգարյանը Կապանի մշակութային կյանքի առաջխաղացման համար ավելի է մտախոգվում, քան կապանցիները:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հաղթող է ճանաչվել Գորիսի պետական քոլեջի թիմը

Խաղ-մրցույթ

Մայիսի 12-ին Գորիսի պետական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Սյունիքի մարզային կենտրոնի կողմից կազմակերպված ինտելեկտուալ ազգային խաղ-մրցույթ՝ «Ինքնաճանաչումը՝ միասնականության գրավական» խորագրով: Խաղ-մրցույթին մասնակցում էր հինգ թիմ՝ Գորիսի պետական քոլեջի, Գորիսի պետական համալսարանի, «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի, Գորիսի երիտասարդական միության, ԵԹԿՊԻ Գորիսի մասնաճյուղի անդամներից կազմված:



Մրցույթը ներառում էր հարցեր հայ ազգային հերոսների եւ հայ մարտիկների մասին, որոնց գործու-

նեությունն ու սխրանքը մեծ նշանակություն են ունեցել Հայաստանի պաշտպանության եւ պետականության ամրապնդման համար, ինչպես նաեւ հայ ազգային երգ ու պարի, եկեղեցական տոների վերաբերյալ:

Խաղն ընթացավ չորս փուլով: 1-ին փուլում ներկայացվեցին հայ ազգային հերոսների, հայտնի պետական եւ ռազմական գործիչների, 2-րդ փուլում՝ ազգային պարերի վերաբերյալ 5-ական հարցեր: Մասնավորապես ներկայացվեցին ազգային պարերից հատվածներ, որոնց անվանումները տրվեցին թիմերի կողմից: 3-րդ փուլում առաջադրվեց ազգային երգերից հատվածներ ներառող հինգ հարց, իսկ 4-րդ փուլում՝ հինգ հարց եկեղեցական տոների, մասնավորապես նրանց նկարագրությանն առնչվող:

Մրցույթն անցավ լարված մթնոլորտում, ակներե էին թիմերի պատրաստվածությունն ու գիտելիքների բարձր մակարդակը: Արդյունքներն ամփոփելուց հետո հաղթող ճանաչվեց Գորիսի պետական քոլեջի թիմը՝ հնչեցված 20 հարցից 18-ին տալով ճիշտ պատասխան:

Շնորհավորում ենք թիմի՝ փայլուն հաղթանակի համար,

ինչպես նաեւ շնորհակալություն հայտնում քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանին՝ թիմի նախապատրաստական աշխատանքներն ըստ պատշաճի համակարգելու եւ մեր հաղթանակը բարձր գնահատելու համար:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում Նվարդ Հարությունյանին եւ Հարություն Պողոսյանին՝ բազմաբովանդակ ազգային խաղ-մրցույթին իրականացնելու համար:

Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել երիտասարդների իրազեկվածության մակարդակը հայ հերոսների եւ ազգային արժեքների վերաբերյալ, նրանց մեջ առավել մեծ հետաքրքրություն առաջացնել դեպի ազգային եւ ուրվագծել հայի հզոր կերպարի տեսլականը: Վստահաբար կարելի է արձանագրել՝ խաղ-մրցույթը ծառայեց իր նպատակին:

Հանդգաված ենք՝ երիտասարդների ինքնաճանաչումը կերբի հայրենաճանաչության, եւ նրանք, պատմությունից դասեր քաղելով, կգիտակցեն հայի հավաքական ուժի անհրաժեշտությունը:

ՍԵՐՎԵՅ ԱՎԱՆԵՅԱՆ



Եվրոպայի չեմպիոնների ընդունելությունը մարզպետարանում

Երեքը՝ Եվրոպայի չեմպիոն

Սարգսյան

Ուկրաինայի Լվով քաղաքում ապրիլի 14-18-ը փոփոխվել է ունեցել քիչ-քոքսինգի պատանիների եւ մեծահասակների Եվրոպայի առաջնությունը: Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էր Սյունիքի մարզի «Գարեգին Նժդեհ» քիչ-քոքսինգի ակումբը:

Մրցումներին մասնակցում էր մոտ 20 երկրի մարզիկ: Ակումբի մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյանի փոխանցմամբ՝ մեկնելով պատասխանատու մրցումների՝ ձգտում են, որ իրենց նվաճած մեդալները ոսկու փայլ ունենան: Այս անգամ ակումբի սաները գերազանցեցին բոլոր սպասելիքները: Երկու մարտիկայանը (մինչև 30 կգ քաշային կարգ), Արայիկ Ավետիսյանը (35 կգ) եւ Արտուշ Ավետիսյանը (45 կգ), հաղթելով իրենց բոլոր մրցակիցներին, կանգնեցին պատվո պատվանդանի վերին հարթակին՝ պարզեատրվելով մեդալներով եւ դիպլոմով: Ի դեպ, մրցումների կազմակերպիչների կողմից դիպլոմով եւ խորհրդանշական մեդալով պարգևատրվեց «Գարեգին Նժդեհ» ակումբին այս մրցումներին մասնակցությունը հովանավորած «Ջանգեզուրի պղնձամուկիբենային կոմբինատ» ՓԲ ընկերության վարչական տնօրեն Վահե Հակոբյանը, ում ակումբի մարզիչը եւ պատանի քիչ-քոքսինգ մարտիկները հայտնում են իրենց երախտագիտությունը:

Եվրոպայի պատանի չեմպիոններին եւ նրանց մարզչին հանդիսավոր պայմաններում մարզասերները դիմավորեցին քաղաքապետարանի



Վիկտոր Խաչատրյանն իր սաների հետ

մեծակա պուրակում: Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը ընդունելով Եվրոպայի նորընծա չեմպիոններին եւ նրանց մարզչին, բարեմաղթանքներ հղեց եւ շնորհավորեց հաղթանակի առիթով մարզիկներին՝ մարզագրքատներ, իսկ ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանին հուշանվեր հանձնելով: Դեռ լիովին չէին մարտել հաղթանակի բերկրանքը, երբ ակումբի սաներին հարկ եղավ մասնակցել Հայաստանի քիչ-քոքսինգի ազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող միջազգային մրցաշարի, որ կայացավ մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում ապրիլի 21-23-ը: Ակումբի սաներից երկուսը՝ Վաչիկ Գյուլբուրդյանն եւ Վոլոդա Բադալյան, դարձան հաղթող, եւ երկուսն արժանացան բրոնզե մեդալների: Այս մրցաշարին էլ ակումբի սաների մասնակցությունն իրականություն դարձավ «Հայաստանի էլեկտրասանցք» ընկերության «Տաթեւ» մասնաճյուղի տնօրեն Արայիկ Գրիգորյանի եւ գործարար Գեորգ Փարսյանի հովանավորության շնորհիվ:

Այս եւ Եվրոպայի առաջնությունում հաղթանակների առիթով Սյունիքի մարզի քիչ-քոքսինգի ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանին եւ մրցանակների արժանացած սաներին ապրիլի 27-ին ընդունեց եւ նոր հաջողություններ մաղթեց Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, մի քանի օր անց՝ քիչ-քոքսինգի

Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Գառնիկ Հայրապետյանը:

Ի դեպ, այս վերջին մրցաշարին մասնակցեց նաեւ Կապանի քիչ-քոքսինգի «Ջանգեզուր» ակումբի յոթ մարզիկ (մարզիչ՝ Վիկտոր Խաչատրյան): Առաջին անգամ մասնակցելով նման պատասխանատու մրցման՝ նրանցից վեցը դարձավ մրցանակակիր. Վահե Հարությունյանը (մինչև 46 կգ քաշային կարգ) եւ Ալեն Խաչատրյանը (մինչև 40 կգ) ֆուլ կոնտակտ կարգում դարձան հաղթող եւ արժանացան ոսկե մեդալի ու պատվոգրի: Ռազմիկ Աբեյանը մինչև 63 կգ եւ Շավարշ Սկրտչյանը (մինչև 32 կգ) ֆուլ կոնտակտ կարգում զբաղեցրին 2-րդ տեղը եւ արժանացան արծաթե մեդալի ու պատվոգրի: Ալեն Սարգսյանը զբաղեցրեց 3-րդ հորիզոնականը՝ արժանանալով բրոնզե մեդալի եւ պատվոգրի: Ակումբի մարզիչը խնդրեց թերթի միջոցով շնորհակալություն հայտնել «ՉՊՄԿ» ՓԲԸ-ի վարչական տնօրեն Վահե Հակոբյանին, «Նորոզին» ՍՊԸ տնօրեն Ռազմիկ Փարսյանին, «Դանդի փրիչս մեթալս Կապան» ՓԲԸ տնօրեն Յուրա Ջաբրայանին, ՀԷՑ «Տաթեւ» մասնաճյուղի տնօրեն Արայիկ Գրիգորյանին՝ «Ջանգեզուր» ակումբին աջակցելու եւ հովանավորելու համար:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ԽՈՍՔ ԴԻՇԱՏԱԿԻ

Սվետլանա Արզումանյան



Կյանքից անժամանակ հեռացավ սիրված ու հարգված մի անձնավորություն՝ Սվետլանա Արզումանյանը:

Ծնվել է 1955թ. սեպտեմբերի 23-ին ծառայողի ընտանիքում: Միջնակարգ կրթություն է ստացել Կապանի N3 ռուսական դպրոցում, որն ավարտել է 1972թ., իսկ բարձրագույն կրթությունը՝ Խարկովի ավտոճանապարհային ինստիտուտի տնտեսագիտության ֆակուլտետում: Բուհն ավարտելուց հետո՝ 1977թ., անդամագրվել է Կապանի ավտոնորոգման գործարանի կոլեկտիվին, նախ՝ ինժեներ-տնտեսագետ, իսկ 1981թ.՝ գլխավոր տնտեսագետ: 1990 թվականից Սվետլանա Արզումանյանի կենսագրությունը կապված է հարկային ոլորտի հետ: Նախ՝ Կապանի պետական հարկային տեսչությունում՝ արդյունաբերական ձեռնարկությունների հարկման բաժնի պետ էր, իսկ 1995թ. կառուցվածքային փոփոխությունից հետո նշանակվել է հարկային վերահսկողության բաժնի պետ: 2000թ. նշանակվել է Պետական եկամուտների նախարարության օպերատիվ հետախուզության վարչության Սյունիքի բաժնի օպերիվագոր: 2001թ. նրան շնորհվել է ՀՀ հարկային ծառայության մայրոքի կոչում: Նույն թվականին նշանակվել է օպերատիվ հետախուզության վարչության ռեգիոնալ 6-րդ բաժնի՝ Կապանի բաժնի օպերիվագոր: 2007թ. նշանակվել

է նույն վարչության Սյունիքի մարզային բաժնի ավագ օպերիվագորի պաշտոնում: 2008 թվականից Կապանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարն էր: Նրան շնորհվել է ՀՀ համայնքային ծառայության առաջին դասի խորհրդակազմի դասային աստիճան:

2013 թվականից աշխատում էր «Քոնստրաքշն» ՍՊԸ-ում՝ գլխավոր հաշվապահ:

«Աշխատանքում՝ խստապահանջ, իսկ առօրյա կյանքում կենսախիճ, շփվող, անմիջական անձնավորություն էր: Ամենակարեւորը՝ միշտ պարտաստակամ էր յուրաքանչյուր հարցում օգնել կողքինին», – այդպես են նրան բնորոշում ճանաչողները: Սվետլանա Արզումանյանն արհեստավարժ, փորձառու մասնագետ էր, խորագիտակ անձնավորություն: Լիակատար տիրապետում էր օրենսդրական դաշտին, սիրով իր փորձն ու գիտելիքները փոխանցում կրտսեր գործընկերներին:

Ամսօրյակն ընկերոջ, արհեստավարժ մասնագետի հիշատակը միշտ վառ կմնա բոլորիս սրտերում: **Աշխատանքային ընկերներ**

Հայաստանի

ՀՀ Սյունիքի մարզի «Ավանքի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար: Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1. ՀՀ քաղաքացիությունը,
- 2. Բարձրագույն կրթությունը,
- 3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- 1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
- 2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
- 3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
- 4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն 3 օր առաջ),
- 5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
- 6. Աշխատանքային գործույթի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2015թ. մայիսի 20-ից մինչև հունիսի 18-ը՝ ժամը 15:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2015թ. հունիսի 25-ին՝ ժամը 14:00-ին, Սյունիքի մարզի «Ավանքի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 87 29 05 հեռախոսահամարով:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱՎԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»

ՍԱՀՄԱՏՈՒԿ ԳՈՍՏԱՍԽԱՆՎՈՒԹՅԱՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԷԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Ֆեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerki@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerki.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.05.2015թ.:

Ցավակցություն Ափսոսանքս են հայտնում լավ մարդ ու իմ լավ բարեկամ Էդիկ Մաթեոսյանի (Շինուհայր) անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:
Աշոտ Ալեքսանյան

Կորել է Կապանի բժշկական ուսումնարանի 1992-93 ուստարվա շրջանավարտ Ջարինե Շուրայի Գեորգյանի CT-1 N 258711 դիպլոմը: Համարել անվավեր: